

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ
 Շրջակա միջավայրի նախարարություն
 ք.Երևան, Կառավարական 3-րդ շենք
 ՖՆ գործառնական վարչություն
 ՀՀ 900011007805
 ՀՎՀՀ 02507198

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
 «Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ
 Կոտայքի մարզ, գ.Ջրվեժ
 ՖՆ գործառնական վարչություն
 ՀՀ 900018002965
 ՀՎՀՀ 00804807

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N° 4
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

«28» «դեկտեմբերի» 2022թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ **Պեպության կողմից դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման մասին պայմանագիր**

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ « 31 » « հունվարի » 2022թ.

Պայմանագրի համարը՝ ՇՄՆ-ԴՇ-22/05

Պետական մարմինը՝ ի դեմս գլխավոր քարտուղար Գ.Գուլյանի և Կազմակերպությունը՝ ի դեմս «Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ-ի տնօրեն Լ.Գաբրիելյանի, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Կազմակերպությունը « 01 » « հոկտեմբերի » 2022 թվականից մինչև «31» « դեկտեմբեր » 2022 թվականն ընկած ժամանակահատվածում իրականացրել է հետևյալ միջոցառումները.

N°	անվանումը	համառոտ բովանդակությունը	Իրականացված միջոցառման				Վճարման ենթակա գումարը (հազար դրամ)
			ակնկալվող արդյունքները և դրանց գնահատման չափանիշները		քանակական կամ արդյունքային ցուցանիշները		
			ըստ պայմանագրի	փաստացի	ըստ պայմանագրի	փաստացի	
1.	«Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ-ի պահպանություն / պաշտպանություն	«ԱՊՀ» ՊՈԱԿ-ի տնօրինության ներքո գտնվող տարածքների պահպանություն (23598.7 հա)	Պահպանված և խնամված էկոհամակարգեր	և Պահպանված և խնամված էկոհամակարգեր	23598.7 հա	23598.7 հա	44698,9

		Գիտաճանաչողական, գիտաարտադրական պրակտիկաների, էկոլոգիական և հասարակության իրազեկման մակարդակի բարձրացմանն ուղղված միջոցառումներ	Չբուսաշրջիկների թվաքանակի աճ	Իրազեկում սոցիալական կայքերում: Ավելացել է թեմատիկ միջոցառումների քանակը և գործնական աշխատանք իրականացնող ուսանողների թիվը:	47879	(Սոցցանցերում իրազեկության բարձրացման հետևանքով) Նախորդ եռամսյակի համեմատ այցելուների թիվը ավելացել է 95.4% Նախորդ եռամսյակի համեմատ նվազել է 57,3 % աշնանային եղանակի պայմաններից ելնելով 2 միջոցառում, մասնակիցների թիվը 35 (Կազմակերպվել է բնապահպանական և էկոլոգիական միջոցառումներ ուսումնական հաստատությունների սովորողների հետ, որոնց հետ կնքվել է պայմանագրեր:)	478,4
		Հարող բնակավայրերի բնակչության շրջանում էկոլոգիական իրազեկություն, էկոլոգիական իրազեկություն	2 միջոցառում, մասնակիցների թիվը՝ 35	2 միջոցառում, մասնակիցների թիվը՝ 35	2 միջոցառում, մասնակիցների թիվը՝ 35		
		Ռեկրեացիայի զարգացմանն ուղղված միջոցառումներ	2 միջոցառում	2 միջոցառում	2 միջոցառում	2 միջոցառում (Կազմակերպվել է բացօթյա հանգիստ կուլեկտիվ խմբով այցելուների հետ, որի շրջանակում իրականացվել են էկոլոգիական շրջայց սերմերի առանձնահատկությունների ուսումնասիրություն	
2.	Հակահրդեհային միջոցառումներ «Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ-ի ենթակայության տակ գտնվող հատուկ պահպանվող տարածքներում («Ջրվեժ» անտառապարկում, «Էրեբունի» պետական արգելոցում, արգելավայրերում և դենդրոպարկերում)	Հանքայնացված շերտերի կառուցում	Համագործակցված պահպանության ապահովում և հարակից տարածքներից հրդեհների ներթափանցման կանխում, միջոցառում	հարակից տարածքներից հրդեհների ներթափանցման կանխում, 1 միջոցառում	1 միջոցառում	«Ջրվեժ» անտառապարկում չորացած ճյուղերի խորը էտի, մաքրման աշխատանքները հրդեհների տարածումը կանխելու համար:	270,0
3.	«Էրեբունի» պետական արգելոցում և հարակից տարածքներում տարածված	Գիտական ուսումնասիրությունների և մոնիթորինգի իրականացում	Տեղի ունեցող բնական երևույթների	Տեղի ունեցող բնական երևույթների	1 հաշվետվություն	1 հաշվետվություն	250,5

	հազվագյուտ, անհետացող և ՀՀ Կարմիր զորքում գրանցված տեսակների գիտական ուսումնասիրությունների և մոնիտորինգի իրականացում	Գիտական ուսումնասիրությունների և հետազոտությունների վերաբերյալ հաշվետվություններ	ազդեցությունների գրանցում և դրանց հետևանքների հայտնաբերում	ազդեցությունների գրանցում և դրանց հետևանքների հայտնաբերում	1 հաշվետվություն	1 հաշվետվություն	
4.	Դենդրոպարկերում և «Ջրվեժ» անտառպարկում բնական ու ներմուծված ծառաթփատեսակների բազմազանության, ֆլորայի հետազոտում, տեսակային կազմի տեղական և ներմուծված ծառաթփատեսակներին համալրման միջոցառումներ	Տեսակային կազմի ամբողջական ցուցակների ստեղծում	Լրամշակված ցուցակներ, ներմուծված նոր տեսակների գրանցում	1 հաշվետվություն, լրամշակված ցուցակներ, ներմուծված նոր տեսակներ	1 հաշվետվություն, լրամշակված ցուցակներում նոր ճշտված տեսակների գրանցում	1 հաշվետվություն, լրամշակված ցուցակներում նոր ճշտված տեսակների գրանցում	250,5
5.	«Որդան կարմիր» պետական արգելավայրի ֆլորայի ուսումնասիրություն և Որդան կարմիր միջատի հաշվառում ու մոնիտորինգ	Ֆլորայի ուսումնասիրություն և Որդան կարմիր միջատի հաշվառում ու մոնիտորինգ	Ֆլորայի ուսումնասիրություն և լրամշակված ցուցակներ, Որդան կարմիր միջատի թարմացված մոնիտորինգային տվյալներ	Ֆլորայի ուսումնասիրություն և լրամշակված ցուցակներ, Որդան կարմիր միջատի թարմացված մոնիտորինգային տվյալներ	1 հաշվետվություն Ֆլորայի ուսումնասիրություն և լրամշակված ցուցակներ, Որդան կարմիր միջատի թարմացված մոնիտորինգային տվյալներ	1 հաշվետվություն Ֆլորայի ուսումնասիրություն և լրամշակված ցուցակներ, Որդան կարմիր միջատի թարմացված մոնիտորինգային տվյալները և հաշվառման թարմացված տվյալներ:	272,5
6.	«Ջերմուկի ջրաբանական» և «Հանքավանի ջրաբանական» պետական արգելավայրերի ֆլորայի ուսումնասիրությունների իրականացում	Ֆլորայի ուսումնասիրությունների իրականացում	Գույքագրված ցուցակներ	Գույքագրված ցուցակներ	1 հաշվետվություն Ֆլորայի ուսումնասիրությունների իրականացում	1 հաշվետվություն Ֆլորայի ուսումնասիրությունների իրականացում և ֆլորայի ցուցակների մշակում:	248,5



7.	«Զիկատար» պետական արգելավայրի գիտական ուսումնասիրություններ	Սերմնային և կոճղաշիվային վերականգնման առանձնահատկությունների ուսումնասիրություններ հատված ծառուտներում: Էկոհամակարգային ծառայությունների գնահատման ուսումնասիրություններ: Տնկարանային տնտեսության վարում	Առաջարկվող միջոցառումների արդյունքում անտառների վիճակի բարելավում, աճի և արտադրողականության բարձրացում: Տնկարանային տնտեսության տարածքը 3.2 հա, տնկիների և սերմնաբուսակների կաչողականությունը առնվազն 70 տոկոս	Առաջարկվող միջոցառումների արդյունքում անտառների վիճակի բարելավում, աճի և արտադրողականության բարձրացման վերաբերյալ: Տնկարանային տնտեսության տարածքը 3.2 հա, տնկիների և սերմնաբուսակների կաչողականությունը առնվազն 70 տոկոս	1 հաշվետվություն, Ուսումնասիրությունների իրականացում և առաջարկությունների մշակում, Տնկարանային տնտեսության տարածքը 3.2 հա, տնկիների և սերմնաբուսակների կաչողականությունը առնվազն 70 տոկոս	1 հաշվետվություն Ուսումնասիրությունների իրականացում և առաջարկությունների մշակում Տնկարանային տնտեսության տարածքը 3.2 հա, տնկիների և սերմնաբուսակների մշակման աշխատանքների կատարումը՝ առնվազն 70 տոկոս կաչողականության համար:	250,5
ԸՆԴԱՄԵՆԸ							46 719,8

ԸՆԴՆՆՆԵՑ

ստորագրություն

ազգանուն, անուն

Կ.Տ.



ԸՆԴՈՒՆԵՑ

ստորագրություն

ազգանուն, անուն

Կ.Տ.



507198



ՄԱՍ 2. ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԵԻ ԳԾՈՎ ԱՐԴՅՈՒՆՔԱՅԻՆ (ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ) ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

Ծրագրի դասիչը
1155

Ծրագրի անվանումը
Բնական պաշարների և բնության հարուկ պահպանվող տարածքների կառավարում և պահպանում

Ծրագրի միջոցառումները

Ծրագրի դասիչը՝	1155	ՊԼԱՆԱՅԻՆ ցուցանիշներ				ՓԱՍՏԱՑԻ ցուցանիշներ				Ծրագրային ցուցանիշից փաստացի կատարողականի շեղման պարզաբանումը
		Առաջին եռամսյակ	Առաջին կիսամյակ	Ինը ամիս	Տարի	Առաջին եռամսյակ	Առաջին կիսամյակ	Ինը ամիս	Տարի	
Միջոցառման դասիչը՝	11006									
Միջոցառման անվանումը՝	Արգելոցապարկային համալիր ԲՀՊ տարածքների պահպանության, գիտական ուսումնասիրությունների, անտառափայտահանության աշխատանքների կատարում									
Նկարագրությունը՝	ԲՀՊ տարածքներում պահպանության, գիտական ուսումնասիրությունների, անտառափայտահանության աշխատանքների իրականացում									
Միջոցառման տեսակը՝	Ծառայությունների մատուցում									
Միջոցառումն իրականացնողի անվանումը՝	Մասնագիտացված կազմակերպություններ									
Արդյունքի չափորոշիչներ										
ԲՀՊ տարածքներում և դենդրոպարկերում գտնվող բնական էկոհամակարգերի լանդշաֆտային և կենսաբանական բազմազանության, բնության ժառանգության պահպանվող տարածք, հա		23598.7	23598.7	23598.7	23598.7	23598.7	23598.7	23598.7	23598.7	
Գիտական ուսումնասիրությունների և հեղափոխությունների վերաբերյալ հաշվեքվությունների թիվը, հա		1	2	3	4	1	2	3	4	
Նախարարության կայքում հրապարակած գիտական ուսումնասիրությունների և հեղափոխությունների վերաբերյալ հաշվեքվությունների թիվը, հա		1	2	3	4	1	2	3	4	
Գիտաճանաչողական, գիտաարտադրական պրակտիկաների, էկոլոգիական և հասարակության իրազեկման մակարդակի բարձրացմանն ուղղված միջոցառումների թիվը, հա		2	4	6	8	3	6	8	10	Ավելացել է թեմատիկ միջոցառումների քանակը և գործնական աշխատանք
Էկոլոգիական կրթությանն ու դաստիարակությանը ուղղված միջոցառումների մասնակիցների թիվը, հա		20	45	70	100	80	140	165	200	<<Ջրվեժ>> անվտայարկում միջոցառումների կազմակերպման բարելավումն ու իրազեկումը ավելացրել է այցելուների թիվը
Ռեկրեացիայի զարգացմանն ուղղված միջոցառումների թիվը, հա		0	1	3	3	1	4	6	8	Էկոլոգիական միջոցառման մասնակից երիտասարդների մասնակցությամբ իրականացվել է բացօթյա հանգիստ
Դրամաշնորհային պայմանագրով նախատեսված միջոցառումների կատարման մակարդակը, տոկոս		0	0	0	100	0	0	0	100	
Հակահրդեհային միջոցառումներ, հա		0	1	2	2	0	2	3	4	<<Ջրվեժ>> անվտայարկում չորացած ճյուղերի էտում և տառածոի մատուցում
Տնկարանային տնկարկային վարում, հա		0	3	3	3.2	0	3	3	3.2	
Տնկարանային տնկարկային տնկիների և սերմնաբուսակների կաշտողականությունը, տոկոս		0	0	0	70	0	0	0	70	
Միջոցառման վրա կատարվող ծախսը (հազար դրամ)		37,056.10	83,376.30	129,696.50	188283.1	37,056.10	74,857.00	114,294.70	186,188.20	

Տնօրեն

Լ. Գաբրիելյան



ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2022թ. ընթացքում «Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ-ում կատարված

Աշխատանքների

2022թ.-ի ընթացքում «Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ-ի տնօրինության ներքո գտնվող ԲՀՊ տարածքների պահպանության, գիտական ուսումնասիրությունների, անտառտնտեսական աշխատանքների կատարման ծառայություններ» ծրագրի իրականացման շրջանակներում կատարվել են հետևյալ աշխատանքները:

«Էրեբունի» պետական արգելոց

Պահպանության և պաշտպանության միջոցառումների շրջանակում իրականացվել է պահպանություն արգելոցում՝ 118.75 հա-ի վրա, որի ընթացքում ռեժիմի խախտման դեպք չի գրանցվել: Հրդեհավտանգ շրջանում պահպանությունը իրականացվել է խստացրած ռեժիմով: Պարբերաբար հավաքվել է մոտակայքում գտնվող աղբանոցից քանու բերած կենցաղային աղբի մնացորդները: Հակահրդեհային միջոցառման շրջանակներում կատարվել է ջրի պաշարի կուտակում: 4 կմ երկարությամբ հանքայնացվել է սահմանային առավել վտանգավոր հատվածի հողաշերտը: Մասնակի բարեկարգվել է արգելոց տանող ճանապարհի մի հատվածը և ձորի վրա կառուցված կամրջակը:

«Որդան կարմիր» պետական արգելավայր

Պահպանության և պաշտպանության միջոցառումների շրջանակում արգելավայրի 2 տեղամասերի 219,85 հա տարածքի վրա իրականացվել է պահպանության աշխատանքներ, որի ընթացքում ռեժիմի խախտման դեպքեր չեն արձանագրվել: Հրդեհավտանգ շրջանում պահպանությունը իրականացվել է խստացված ռեժիմով: Արգելավայրի 2 տեղամասերում հավաքվել է մայրուղուց և հարակից բնակավայրերից քանու բերած կենցաղային աղբի մնացորդները և արգելավայրի սահմաններից դուրս բերվել: Արագափի տեղամասի սահմանային հատվածում կատարվել է հակահրդեհային աշխատանքներ՝ հանքայնացվել է 3 կմ երկարությամբ հողաշերտը:

Ստեփանավանի «Սոճուտ» դենդրոպարկ

Պահպանության և պաշտպանության միջոցառումների շրջանակներում իրականացվել է պահպանություն դենդրոպարկի 35 հա վրա: Ձմռանը ձյան տեղումներից հետո մաքրվել են ջերմատան ապակյա շրջանակները, իսկ հողը չորանալու դեպքում ձյուն է ներկրվել և տարածվել տնկիների շուրջ:

Նախապատրաստվել և թարմացվել է 18 (տասնութ) պիտակներ և 10 (տասը) ցուցատախտակներ: Դենդրոպարկը գարնանը մաքրվել է թափուկից: Հավաքված մայրու կոները մշակվել և անջատվել են սերմերը: Ձյան տեղումներից հետո մշտադալար ծառերը և թփերը թափ են տրվել, իսկ ծանրության տակ կոտրված ճյուղերը կտրտվել և տարածքից դուրս է բերվել: Մարտ ամսին տեղացած առատ ձյան պատճառով վնասվել են էլեկտրալարերը և ջերմատունը՝ շուրջ 269,5 քառ. մակերեսով փլվել է: Ջերմատանը գտնվող վնասված տնկիները խմբավորվել են, մի մասը տեղափոխվել է բաց գրունտ, իսկ մյուս լրիվ վնասվածները դուրս գրվել: Կատարվել է կոտրված ապակիներից և մետաղյա մասերից տարածքի մաքրում: Միջտեղամասային ճանապարհները հարթեցվել են սեզոնի ընթացքում 3 անգամ և ներկրված ավազով եզրագծվել: Հավաքվել և մաքրվել է ծաղկաբույսերի սոխուկները՝ 5 կգ և սերմերը: Վարդերի, ծաղկաբույսերի և մյուս բազմամայա թփատեսակների շուրջը փորվել է հողը, կատարվել է քաղհան-փխրեցում, իսկ ամռանը ոռոգում ձեռքով՝ դույլերով, և պարարտացվել է, իսկ աշնանը կատարվել է սոխուկների ու սերմերի ցանք և բուկից: Հնձվել են գագոնները և ձևավորվել են առանձնյակ թփերը՝ ասպիրակները, չմենիները, ցախակեռասները և այլ թփերը: Ձեռքի մկրատով խուզվել և հավասարեցվել են բորոյուրները (կանաչ ցանկապատ): Ջերմատանը կատարվել է հողի նախապատրաստական աշխատանքներ, ցանվել է մայրու և 6 տեսակ ծաղկի սերմեր, կտրվել, նախապատրաստվել և տնկվել են 1500 հատ թույայի և թույեվիկի և 500 հատ վարդի կտրոններ: Բաց տնկարանում կատարվել է հողի մշակման աշխատանքներ և պարարտացվել: Անտառապաթյուղիական ուսումնասիրությունների արդյունքներով կատարվել է քիմիական պայքարի աշխատանքներ՝ հայտնաբերված վնասատուներով և հիվանդություններով վարակի օջախներում: Հրդեհավտանգ հատվածներում կատարվել է խոտածածկի հեռացման աշխատանքներ: Վերանորոգվել է մետաղյա ցանկապատը և թիվ 2 տնակի քայքայված սրահը ու տարածքը մաքրվել շինարարական աղբից: Աշնանը դենդրոպարկի տարածքը մաքրվել է աշնանային թափուկից: Դենդրոպարկի մուտքի դռները փոխվել է, տեղադրվել է նոր, ժամանակակից դռներ: Դենդրոպարկը ունեցել է բազմաթիվ այցելուներ, որի պատճառով կատարվել է ամենօրյա մաքրման աշխատանքներ, ինչպես տարածքում, այնպես էլ սանհանգույցներում:

Իջևանի «Դենդրոպարկ»

Պահպանության և պաշտպանության միջոցառումների շրջանակներում իրականացվել է պահպանություն դենդրոպարկի 5,7 հա վրա՝ խստացված ռեժիմով, հրդեհավտանգ շրջանում: Կատարվել է տարածքի մաքրման աշխատանքներ՝ գարնանային թափուկից և կենցաղային աղբից: Ձյան տեղումներից հետո մշտադալար ծառերը և թփերը թափ են տրվել: Կատարվել է բաժակափոր նորատունկ տնկիների շուրջ և ծառերի ու թփերի ձևավորում: Լրացման աշխատանքների ընթացքում՝ տնկվել է 10 հատ սոճի և 40 հատ հացենի: Մաքրվել է սահմանակից հատվածում Աղստև գետի հունը, փորվել է ջրատար առու 400 գծմ երկարությամբ: Հրդեհավտանգ հատվածներում և բացատներում կատարվել է խոտածածկի

հեռացման աշխատանքներ: Փորվել է շուրջ 500քմ հողատարածք և կտրվել, մշակվել և տնկվել է շուրջ 10 000 տարբեր ծաղկող թփերի կտրոններ, նաև 300 հատ սյունաձև թույայի և 300 հատ տոսախի կտրոններ, որոնք տեղափոխվել են «Ջրվեժ» անտառպարկից: Աշնանը մշակվել է շուրջ 500քառ. մետր տարածք և վարձակալված տարածքից ձիակասկի, սիրիական վարդի, սապոնաձառի շուրջ 1000 տնկիները տեղափոխվել և տնկվել են այստեղ, որպես դպրոց հողամաս: Հավաքվել և ցանվել է 15,5 կգ ծառաթփատեսակների սերմեր:

Բերդի «Սորաններ» դենդրոպարկ

Բերդի «Սորաններ» դենդրոպարկում պահպանության և պաշտպանության միջոցառումների շրջանակներում իրականացվել է պահպանություն 62,17հա-ի վրա, որի ընթացքում խախտումներ չեն արձանագրվել, հրդեհավտանգ շրջանում պահպանությունը իրականացվել է խստացված ռեժիմով: Մաքրվել է տարածքը գարնանային և աշնանային թափուկից, ինչպես նաև կենցաղային աղբի մնացորդներից: Տեղադրվել և ներկվել են երկաթյա սյուներ՝ կանաչ տարածքները մեքենաների մուտքը սահմանափակելու համար: Պատրաստվել և դենդրոպարկի տարածքում տեղադրվել է թվով 10 նստարան: Իրականացվել է ծառերի էտի և ձևավորման աշխատանքներ: կատարվել են լրացման աշխատանքներ, տնկարանից տեղափոխվել և տնկվել է 50 հատ ուռենու, 100 հատ բարդու, 6 հատ թույայի, 20 հատ սոճու տնկիներ 80 հատ վարդի, 194 տոսախի և 40 հատ արմավաշուշանի թփեր: Իրականացվել է ոռոգման և խմելու ջրագծերի վերանորոգման աշխատանքներ: Մոլախոտերի և վնասատուների դեմ կատարվել են քիմիական պայքարի աշխատանքներ շուրջ 2 հա տարածքի վրա և կրապատվել են ծառերի բները: Դենդրոպարկի կենտրոնական բացատային մասերում կատարվել է խոտածածկի հնձում և հեռացում, հակահրդեհային նպատակով, 6,5 հա տարածքով: Մաքրվել է տնկարանի 2000քմ. տարածքը, փոխվել է ոռոգման ներքին ցանցը, հողը վարվել է և տնկվել է թույայի, բարդու, տոսախի, վարդի կտրոններ և մայրու, սոճու սերմնաբույսեր, ինչպես նաև ցանվել է ձիակասկի սերմ: Դենդրոպարկի տարածքում կառուցվել է 2 փայտից տաղավար և կամրջակ: Վերանորոգվել է ոռոգման ցանցը և կատարվել են ոռոգման աշխատանքներ, որից հետո փխրեցում և քաղհան: Ներկվել է դենդրոպարկի մուտքի դարպասը և դուռը: Պատրաստվել և մուտքի մասում տեղադրվել է «Սորաններ» դենդրոպարկ գրառմամբ մեծ վահանակ: Իրականացվել է տարածքում ծաղիկների տնկում և տարվել են խնամքի աշխատանքներ, էտվել են տարածքի ծառերի չորացած ճյուղերը: Աշնանը կատարվել է լրացման աշխատանքներ՝ տնկվել է 150 հատ բարդու, հացենու, լորենու, կաղնու տնկիներ: Դենդրոպարկի կենտրոնական հատվածում և ձևավորված ծառուղիներում հեռացվել է արմատային մացառները, չորացած ճյուղերը, բնական վերածը և ձևավորվել են գեղազարդիչ տեսակները:

Վանաձորի «Սարուխանայն Ժ-ի անվան» դենդրոպարկ

Դենդրոպարկում վարձակալի կողմից 1,944 հա տարածքի վրա գարնանը և աշնանը կատարվել են մաքրման, չորացած ճյուղերի էտի և թափոնների հավաքման ու դուրս բերման աշխատանքներ: Ծաղկանոցներում և կանաչ ցանկապատերի շրջակայքում իրականացվել է հողի մշակման, բույսերի ձևավորման աշխատանքներ: Տեսակային կազմը լրացվել է մեկ նոր տեսակով՝ սոճի ցածրած տեսակով: Երիտասարդ եղևնիների մոտ կատարվել է քիմիական պայքարի աշխատանքներ, բաժակափոր: Տարածքում տեղադրվել են նոր արձաններ, ցուցանակներ: Կատարվել են պայմանագրային բոլոր պարտավորությունները:

«Ջրվեժ» անտառպարկ

Պահպանության և պաշտպանության միջոցառումների շրջանակներում իրականացվել է պահպանության աշխատանքներ անտառպարկում՝ 423.8 հա-ի վրա, հրդեհավտանգ շրջանում պահպանությունը իրականացվել է խստացրած ռեժիմով, որի ընթացքում կանխվել է ապօրինի արածեցման 8 (ութ) դեպք և մեկ հրդեհ:

Անտառմշակույթների միանվագ խնամք միջոցառման շրջանակում էտվել են շուրջ 500 ծառաթփատեսակների չորացած ճյուղեր, առաջացած թափուկը հավաքվել և դուրս է բերվել տարածքից: Ձյան տեղումներից հետո մշտադալար ծառերը և թփերը թափ են տրվել: Մաքրվել են ճանապարհները ձյունից և թափուկից: Անտառպարկում կատարվել է քիմիական պայքարի աշխատանքներ շուրջ 12հա տարածքի վրա: Շուրջ 1500 ծառերի մոտ կատարվել է բների մաքրում և կրապատում: Լրացման աշխատանքների շրջանակում տնկվել է գարնանը 300 հատ կեչու տնկիներ, փակ արմատային համակարգով: Վերանորոգվել է պահակատունը, տնօրենի աշխատասենյակը և աշխատակիցների հանգստի սենյակը: Անտառպարկում տեղադրվել են սյուներ՝ լուսավորության համար: Կատարվել է ոռոգման համակարգի վերանորոգում վթարված հատվածներում: Իրականացվել են ոռոգման աշխատանքներ: Առավել հրդեհավտանգ հատվածներում ճանապարհամերձ և բացատային մասերում, կատարվել է խոտաբույսերի հնձում և մաքրում: Հնձված խոտը հավաքվել և դուրս է բերվել տարածքից:

Գիտական բաժնի կողմից կատարված ուսումնասիրության արդյունքների հիման վրա պարարտացվել են շուրջ 300 մշտադալար խոնավասեր ծառատեսակներ, որոնք սնուցման խիստ կարիք ունենին: Հավաքվել է սոճի դրիմյան ծառատեսակի կոներ՝ սերմեր ստանալու նպատակով, Ստեփանավանի <<Սոճուտ>> դենդրոպարկի տնկարանում ցանելու համար: Տնկարանի ընդլայնման համար պատրաստվել է նոր

ցանցավանդակ, որտեղ հողը մշակվել է և տնկվել են սոճու, գիհու և տոսախի սերմնաբույսեր: Անտառապարկի կենտրոնական ասֆալտյա ճանապարհի եզրով ձևավորված բարդի բուլեի ծառուղին ձևավորվել է՝ կատարվել է չորացած կմախքային ճյուղերի հեռացում: Վաղ գարնանից սկսած վերանորոգվել է ոռոգման ցանցը և փականները: Կատարվել է հակահրդեհային ճանապարհների հանքայնացում: 2021թ. սեպտեմբերին բռնկված հրդեհի հետևանքով վնասված ծառապատ տարածքում կատարվել է մաքրման աշխատանքներ և նախապատրաստվել ծառատունկի: Անտառապարկի կենտրոնական հատվածում իրականացվել է ամենօրյա մաքրման աշխատանքներ: Աշնանը լրացման կարգով՝ հրդեհված տարածքում տնկվել է շուրջ 100 սոճիներ, իսկ տարածքի վնասված ծառերի ճյուղերը էտվել են, թափուկը հավաքվել և դուրս բերվել տարածքից: Սերմնային վերականգման համար հավաքվել է ծիրանենու կորիզներ և կատարվել ցանք հրդեհված տարածքում, բարձրարժեք տեսակների համար որպես ծածկող տեսակ: Անտառապարկի մուտքի մոտ՝ օղակաձև հատվածում կատարվել մաքրում և կազակական գիհու տնկիների տնկում:

«Զիկատար» պետական արգելավայր

«Զիկատար» պետական արգելավայրում պահպանության և պաշտպանության միջոցառումների շրջանակում իրականացվել է պահպանության աշխատանքներ 150 հա տարածքի վրա, հրդեհավտանգ շրջանում պահպանությունը իրականացվել է խստացված ռեժիմով, որի ընթացքում խախտումներ չեն արձանագրվել: Արգելավայր տանող գրունտային ճանապարհի որոշակի հատվածներում կատարվել են մաքրման և հարթեցման աշխատանքներ: Հարակից Կողբ համայնքի բնակչության շրջանում իրականացվել են էկոլոգիական իրազեկության բարձրացման աշխատանքներ: Իրականացվել է արգելավայրի ցանկապատի, ջրագծի վերանորոգում և տարածքի բարեկարգում: Տնկարանում իրականացվել են տնկանյութի աճեցման և խնամքի աշխատանքներ աճեցվել է շուրջ 5000-ից ավել տնկիներ: Մշակվել և տնկվել են թույայի, գիհու և տոսախի 1200 կտրոններ: Ընդլայնվել է ծնեբեկի դաշտը՝ հավաքվել և ցանվել են սերմեր: Արգելավայրի առավել վտանգավոր տարածքներում իրականացվել են հակահրդեհային միջոցառումներ՝ բուսազրկվել են ճանապարհները և հնձվել խոտաբույսերը: Շարունակվում է արգելավայրի նախորդ տարում սկսված էկոտուրիստական ենթակառուցվածքների վերանորոգման աշխատանքները:

«Հանքավանի ջրաբանական » և «Ջերմուկի ջրաբանական»

Արգելավայրերում իրականացված պահպանության աշխատանքների արդյունքում ռեժիմի խախտման դեպքեր չեն գրանցվել: «Ջերմուկի ջրաբանական» արգելավայրի տարածքում ռազմական դրության պատճառով այժմ աշխատանքներ չեն կատարվում:

<<Արգելոցապարկային համալիր>> ՊՈԱԿ-ի դեմոկրատիզացիայի և
<<Զիկատար արգելավայրում իրականացվել են գարնանային և աշնանային
ստուգումներ, որի արդյունքներով ամփոփվել են կատարված աշխատանքները,
արտադրված առկա տնկանյութի քանակը և տեսակները:

**2022թ. ընթացքում կազմակերպության գիտության բաժնի կողմից
կատարվել են հետևյալ գիտական աշխատանքները**

2022թ.-ին կազմակերպության գիտության բաժնի կողմից շարունակվել են գիտական աշխատանքները: Գիտության բաժինը տարիներ շարունակ համագործակցում է բարձրագույն ուսումնական հաստատությունների հետ՝ Հայաստանի Ազգային Ագրարային, Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ համալսարանների, ինչպես նաև «Մխիթար Սեբաստացի», «Դեղին Արտույտ», «Հուսո տուն», «Երևանի զբոսաշրջության, սպասարկման և սննդի արդյունաբերության հայ-հունական պետական քոլեջ» կրթահամալիրների հետ:


2022թ.-ի ընթացքում ՀԱԱՀ-ի և ՀՊՄՀ-ի 7 ուսանողներ իրենց արտադրական պրակտիկան անց են կացրել «Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ-ի կազմում գտնվող «Ջրվեժ» անտառապարկում: «Ջրվեժ» անտառապարկում «Մխիթար Սեբաստացի», «Արեգնազան» կրթահամալիրների և մի շարք դպրոցների աշակերտների համար ձմռան ամիսներին առատ ձյան պայմաններում կազմակերպվել են ձմեռային խաղեր, իսկ հետագայում թեմատիկ միջոցառումներ՝ «Ես սիրում եմ բնությունը» խորագրով միջոցառում-սեմինար, որի շրջանակներում կատարվել է սերմնացան իրենց իսկ կողմից՝ ծաղկաբաժակներում: Երեխաների կողմից հավաքվել են նաև տարբեր բուսատեսակներ և իրականացրել հերբարիումների պատրաստում: Էկոկրթական շրջայցերի ընթացքում կազմակերպվել է ծանոթություն անտառապարկի բուսական աշխարհի հետ՝ նպատակ ունենալով դպրոցահասակ երեխաների շփումը բնության հետ ավելի մեծացնելու համար: Անտառների և «Վայրի բնություն» միջազգային օրվա առիթով իրականացվել է միջոցառում դպրոցականների հետ առցանց քննարկումների ձևով: Կազմակերպվել է դասընթաց «Red Book» հավելվածի միջոցով բույսերի պաշտպանություն խորագրով: Պարբերաբար սոց-ցանցերի միջոցով կատարվել է իրազեկումներ «Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ-ում կատարված աշխատանքների և տարածքների մասին: «Ջրվեժ» անտառապարկում անցկացվել են էկոկրթական շրջայցեր «Հայ ասպետ» և «Մեսրոպ Մաշտոցի» անվան դպրոցների, «Իմ ուղին» ուսումնավերականգնողական կենտրոնի աշակերտների հետ: Սեպտեմբեր ամսին «Ջրվեժ» անտառապարկում անցկացվել են փեյնթբոլի դասընթացներ՝ «Լեգիոն» ուսումնական կենտրոնի սաների հետ: Սեպտեմբերի 13-ին, բնության հատուկ պահպանվող տարածքների օրվա առթիվ իրականացվել է հատուկ միջոցառում՝ խրախուսելու ՊՈԱԿ-ի ենթակայության տակ գործող թվով ութ հիմնարկների այն աշխատակիցներին, որոնք բարձր պատասխանատվությամբ և անձնվիրությամբ են կատարել իրենց պարտականությունները: Աշխատակիցները արժանացան

պատվոգրերի և շնորհակալագրերի: Հրապարակվել է տեղեկատվական գրքույկ «Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ-ի ենթակայության տակ գտնվող տարածքների վերաբերյալ, որը կառույցի մասին պարունակում է մանրամասն տեղեկություններ: Կազմակերպությունը լրագրողների համար կազմակերպել է մեկօրյա շրջայց՝ «Ջրվեժ» անտառապարկում և Ստեփանավանի «Սոճուտ» դենդրոպարկում, որի ընթացքում ևս մեկ անգամ հանրությանը ներկայացվել է դենդրոպարկի և անտառապարկի յուրահատկությունները: Բերդի «Սորաններ» դենդրոպարկում, «Աղջիկ երեխայի» տոնի առթիվ, իրականացվել է ծառատունկ, տնկվել են 80 վարդի տնկիներ և պուրակը անվանվել է «Աղջիկ երեխայի պուրակ»: Հոկտեմբերի 14-ին բնական աղետների ազդեցության նվազեցման միջազգային օրվա առթիվ, Աբովյանի թիվ 2-րդ դպրոցի աշակերտների հետ անցկացվել է դաս-միջոցառում, որի շրջանակում քննարկվել է բնական աղետների ազդեցության նվազեցման վերաբերյալ դաս-միջոցառում: «Ջրվեժ» անտառապարկում, Ձորաղբյուր համայնքի միջնակարգ դպրոցի աշակերտների հետ անցկացվել է էկոլոթական դասընթաց, ինչպես նաև կազմակերպվել է բացօթյա նկարչական միջոցառումներ: 2022թ.-ին ունեցել ենք շուրջ 160000 այցելու:


«Էրեբունի» պետական արգելոց

Արգելոցում և հարակից տարածքներում տարածված և հազվագյուտ, անհետացող, ՀՀ «Կարմիր գրքում» գրանցված տեսակների գիտական ուսումնասիրությունների և մոնիթորինգի իրականացման շրջանակներում կատարվել են ֆլորայի և բուսականության ուսումնասիրություններ, որի արդյունքներով 292 տեսակների հերբարիումները նորից մշակվել են և պլանավորվել է վնասված հերբարիումները թարմացնել: Վայրի ցորենների աճելավայրերը տեղադրվել են քարտեզների վրա մոնիթորինգի աշխատանքները արդյունավետ դարձնելու համար (քարտեզը կցվում է): Սկսվել են այդ տեսակների նոր հերբարիումների պատրաստման աշխատանքները՝ ցուցատախտակներ ստեղծելու նպատակով: Կատարված ուսումնասիրությունների արդյունքներով հիմնական պահպանվող տեսակներից վայրի ցորենները՝ ց² արարատյան, ց. Ուրարտու և ց. բեռտական, այս տարի ավելի ցածրաճ էին տեսական չոր և շոգ եղանակային պայմանների պատճառով: «Կարմիր գրքում» գրանցված բույսերից լավ տարածված էին հիրիկ նրբագեղ (*Iris elegantissima*), գազ կորաեղջյուրավոր (*Astragalus comptoceras*), տերեփուկ երևանյան (*Centaurea erivanensis*), կանգար վարդագույն (*Gundelia rosea*) տեսակները: Ակտինոլեմ խոշորաբաժակ (*Actinolema macrolema*) տեսակը շատ ավելի քիչ է տարածված: Վաղ գարնանը շուտ է ծաղկում և վեգետացիան շուտ ավարտվում է: Մնացած տեսակները՝ Շովիցիա գեղապտուղ (*Szovitsia callicarpa*), Վարդատերեփուկ մուշկային (*Amberboa moschata*), Շարդինիա խոշորապտուղ (*Chardinia macrocarpa*),


2. Ընտրված ՄԿՑ-ների տարածվածությունը Էրեբունի պետարգելիցում 2008
 ա/ *Triticum araraticum* Jakubz.




բ/ *Triticum boeoticum* Boiss.



զ/ *Triticum urartu* Tumanian ex Gandilyan



ը/ *Aegilops tauschii* Coss.



Կաթնուկ թախտաջանի (*Lactuca takhtadzhiani*), Ճարճատուկ գեղձավոր (*Cichorium glandulosum*), Սերինոսահատ տարօրինակ (*Phalaris pardoxa*) բուսատեսակների վեգետացիան այս տարի շուտ էր ավարտվել, որին նպաստել էր շոգ և չոր եղանակային պայմանները: Հավաքվեց 35 բուսատեսակ և պատրաստվեց հերբարիում: Արգելոցի սահմաններից դուրս սահմանակից տարածքները արածեցված էին և դիտարկում բույսերի վրա կատարել հնարավոր չէր: Հավաքվել են սերմեր՝ ցորեն Ուրարտու և ցորեն արարատյան տեսակների ու կատարվել է ցանք ցանցավանդակներում:

«Հանքավանի ջրաբանական» պետական արգելավայր

Արգելավայրի ֆլորայի ուսումնասիրության միջոցառման շրջանակներում իրականացվել են հավաքված նյութերի ուսումնասիրություն: Արգելավայրից նախորդ տարի հավաքված 35 բուսատեսակները ճշտվել են: Շարունակվել է ֆլորայի ուսումնասիրությունը, որի արդյունքներով անտառային բուսատեսակներում ավելացել է մեկ «Կարմիր գրքում» գրանցված բուսատեսակ՝ «Մրտավարդ կովկասյան», և վերջին տվյալներով ճշգրտված ևս մեկ տեսակ՝ «Հաղարջենի կարմիր» տեսակը: Այժմ անտառային համակեցություններում անտառկազմող տեսակները 34-ն են:

«Հանքավանի ջրաբանական» արգելավայր 2022թ. կատարած ուսումնասիրության ընթացքում Մարմարիկ գետի վերին հոսանքի ջրհավաք ավազանում նկատելի էր մակերեսային ջրերի հոսքի պակասելը: Արգելավայրի 2000-2100 մետր բարձրություններում սուբալպյան բուսականություն է, իսկ ավելի բարձրություններում ալպյան: Այստեղ անցումը սուբալպյանից ալպյան կտրուկ չէ և հնարավոր չէ սահմանազատել: Այստեղ արևելյան լանջին հայտնաբերվեց ռոտոդենդրոնի (*Rhododendron caucasicum*) բուսուտներ:

Արգելավայրի ֆլորան այժմ ներկայացված է 122 տեսակներից, որոնք պատկանում են 33 ընտանիքի, և որոնցից առավել հարուստ է բարդաձաղկավորների (*Asteraceae*) ընտանիքը, շուրջ 23 տեսակ, հաջորդ խոշոր ընտանքներն են՝ թիթեռնաձաղկավորները, վարդագգիները և գորտնուկազգիները: Հարուստ է նաև «Կարմիր գրքում» գրանցված տեսակներով, շուրջ 12 տեսակ: Հավաքվեց և պատրաստվեց 40 տեսակների հերբարիում, որը նաև որոշվեց, որոնցից 18 տեսակներ ընդգրկվեց ֆլորայի ցուցակում, իսկ հավաքված երկու տեսակները՝ շուշան հայկական (*Lilium armenum*) և խոլորձ արական (*Orchis mascula*) մտած են «Կարմիր գրքում»: (ֆլորայի տեսակային կազմի ցուցակը կցվում է):

Աղյուսակ 1. «Հանքավանի ջրաբանական» արգելավայրի ծառաթփային բուսատեսակները

N	Ծառաթփատեսակները ըստ ընտանիքների (լատիներեն-հայերեն)	Կենսաձև
	Angiospermae – Ծածկասերմեր	
	Berberidaceae – Կծոխուրազգիներ	
1	Berberis orientalis Schneid – Կծոխուր արևելյան կամ Ծորենի արևելյան	ՏԹ
	Betulaceae – Կեչազգիներ	
2	Betula litwinowii A. Doluch. – Կեչի լիտվինովի	ՏԾ
3	Betula pubescens Ehrh. – Կեչի թավրոս	ՏԾ
4	Betula pendula Roth. – Կեչի կախվող (լացող)	ՏԾ
5	Carpinus betulus L. – Բոխի սովորական	ՏԹ
	Caprifoliaceae – Ցախակեռասազգիներ	
6	Lonicera caucasica Pall. – Ցախակեռաս կովկասյան	ՏԹ
7	Viburnum lantana L. – Բոնչի լանթանի կամ գերիմաստի	ՏԹ
	Ericaceae – Հավամրգազգիներ	
8	Rhododendron caucasicum L. – մրտավարդ կովկասյան	ՏԹ
	Fagaceae – Հաճարազգի	
9	Quercus macranthera Fisch. et C.A. Mey. ex Hohen – Կաղնի արևելյան կամ խոշորառէջ	ՏԾ
	Oleaceae – Ձիթենազգիներ	
10	Fraxinus excelsior L. – Հացենի սովորական	ՏԾ
	Rhamnaceae – Դժնիկազգիներ	
11	Rhamnus cathartica L. – Դժնիկ լուծողական	ՏԹ
	Rosaceae – Վարդազգիներ	
12	Cerasus mahaleb (L.) Mill. – Բալենի մահալեբյան	ՏԹ
13	Malus orientalis Uglitzk. – Խնձորենի արևելյան	ՏԾ
14	Padus racemosa (Lam.) Gilib. (= P. avium Mill.) – Թխենի սովորական	ՏԾ

15	<i>Pyrus communis</i> ssp. <i>caucasica</i> (Fed.) Browicz –Տանձենի անտառային կամ կովկասյան	ՏԾ
16	<i>Ribes rubrum</i> L. -Հաղարջենի կարմիր	ՏԹ
17	<i>Rosa canina</i> L. (glaucous dog rose) –Մաւրենի սովորական	ՏԹ
18	<i>Rosa sosnovskyana</i> – Մաւրենի սոսնովսկու	ՏԹ
19	<i>Rosa spinosissima</i> L. –Մաւրենի առատափուշ	ՏԹ
20	<i>Rubus idaeus</i> L. –Մոռենի սովորական	ՏԹ
21	<i>Prunus divaricate</i> Lebed. (= <i>P. cerasifera</i>) –Սալորենի սովորական	ՏԹ
22	<i>Crataegus caucasica</i> K. Koch. –Սզնի կովկասյան	ՏԹ
23	<i>Sorbus aucuparia</i> L. –Արոսենի սովորական	ՏԹ
24	<i>Sorbus kuznetzovii</i> Zinserl. –Արոսենի կուզնեցովի	ՏԹ
25	<i>Spiraea hypericifolia</i> L. –Ասպիրակ սրոհունդատերեւ	ՏԹ
	Salicaceae –Ուռենազգիներ	
26	<i>Populus tremula</i> L. –Բարդի անտառային կամ կաղամախի	ՏԾ
27	<i>Salix viminalis</i> L. –Ուռենի ճիպոտանման (կողովի)	ՏԹ
28	<i>Salix alba</i> L. –Ուռենի սպիտակ	ՏԾ
29	<i>Salix pentandroides</i> Skvortz. –Ուռենի հնգառէջ	ՏԹ
30	<i>Salix caprea</i> L. –Այծուղի	ՏԾ
31	<i>Salix pseudomedemii</i> E. Wolf. –Ուռենի կեղծ Մեդեմի	ՏԾ/ՏԹ
	Tiliaceae –Լորենազգիներ	
32	<i>Tilia caucasica</i> Rupr. (= <i>T. begoniifolia</i> Stev.) –Լորի կովկասյան (լ. բեզոնիատեւ)	ՏԾ
33	<i>Tilia cordata</i> Mill. –Լորի մանրատերև	ՏԾ
	Ulmaceae –Թելազգիներ	
34	<i>Ulmus glabra</i> Huds. (= <i>U. elliptica</i> K. Koch) –Թելի էլիպսաձև	ՏԾ

Աղյուսակ 2.

«Հանքավանի ջրաբանական» պետական արգելավայրի ֆլորայի կազմը

NN	Տեսակ
	2
	1. Apiaceae
1.	Carum caucasicum Boiss.
2.	Chamaesciadium acaule (Bieb.) Boiss.
3.	Pimpinella confuse Woronow
4.	P. saxifrage L.
	2. Asteraceae
5.	Aetheopappus pulcherrimus(W.)Boiss.
6.	Anthemis anahytiae Woronow
7.	Aster alpinus L.
8.	Centaurea fischeri Willd.
9.	Centaurea montana
10.	Centaurea atropurpurea
11.	Cirsium obvallatum (Bieb.) DC.
12.	C. rhizocephalum C.A.Mey.
13.	Doronicum oblongifolium DC.
14.	Erigeron venustus Botsch.
15.	Gnaphalium supinum L.
16.	Hieracium cimosum L.
17.	Inula glandulosa Willd.

18.	<i>Inula helenium</i>
19.	<i>Jurinea subacaulis</i> Fisch. Et C.A. Mey.
20.	<i>Tragopogon graminifolius</i> DC.
22.	<i>Scorzonera meyeri</i> (C.Koch) Lipsch
23.	<i>S. seidlitzii</i> Boiss.
24.	<i>Senecio aurantiacus</i> DC.
25.	<i>Taraxacum fulviple</i> Harv.
26.	<i>T. stevenii</i> (Spr.) DC.
27.	<i>Tragopogon reticulatus</i> Boiss. Et Huet
28.	<i>Tripleurospermum subnivale</i> Pobed.
	3. Brassicaceae
29.	<i>Alyssum tortuosum</i> Willd.
30.	<i>Arabis brachycarpa</i> Rupr.
31.	<i>Cardamine uliginosa</i> Bieb.
32.	<i>Coluteocarpus vesicaris</i> (L.) Holboe
33.	<i>Draba bruniifolia</i> Stev.
34.	<i>Draba siligiosa</i> Bieb.
35.	<i>Eunomia rotundifolia</i> C.A. Mey.
36.	<i>Isatis canescens</i> DC.
	4. Boraginaceae
37.	<i>Echium vulgare</i>
	5. Campanulaceae
38.	<i>Campanula aucheri</i> DC.
39.	<i>C. collina</i> Bieb.
40.	<i>C. stevenii</i> Bieb.

41.	<i>C. trautvetteri</i> Grossh.
42.	<i>C. tridentate</i> Schreb.
	6.Caryophyllaceae
43.	<i>Cerastium purpurascens</i> Adams.
44.	<i>Dianthus cretaceous</i> Adams
45.	<i>Dianthus borbatus</i>
46.	<i>Cypsophila tenuifolia</i> Bieb.
47.	<i>Minuartia caucasica</i> (Adams) Mattf.
48.	<i>M.oreina</i> (Mattf.) Schischk.
49.	<i>Silene dianthoides</i> Pers.
